

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ*

*ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

Առարկա՝ Պատմություն

Մասնակից՝ Մ. Պետրոսյան

Ղեկավար՝ Ա. Սաֆարյան

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույն նախաձեռնություն և  
ստեղծագործական ունակությունների զարգացումը պատմության  
դասավանդման ընթացքում

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն \_\_\_\_\_ 3

Գլուխ առաջին. Ինքնություն, նախաձեռնության և ստեղծարարության  
ունակությունների էությունն ու սահմանումը \_\_\_\_\_ 4

Գլուխ երկրորդ. Պատմության դասվանդման մեջ ինքնություն նախաձեռնության և  
ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները \_\_\_\_\_ 7

Եզրակացություններ \_\_\_\_\_ 14

Գրականության ցանկ \_\_\_\_\_ 15

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ թեման արդիական է, քանի որ ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ինքնուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունը և դրանց զարգացումն ու դրսևորումները պատմության դասավանդման ընթացքում:

Ըստ այդմ առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել Ինքնուրույն, նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունն ու սահմանումը
- Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժական միջոցները
- Պարզել Բազմատեսանկյուն մոտեցման կիրառման արդյունավետությունը պատմության դասավանդման մեջ ստեղծագործականության զարգացման համատեքստում

Ըստ այդմ էլ հետազոտական աշխատանքը բաժանվում է երկու գլուխների, համապատասխանաբար՝

Գլուխ առաջին. Ինքնուրույն, նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունն ու սահմանումը

Գլուխ երկրորդ. Պատմության դասավանդման մեջ ինքնուրույն նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները:

## Գլուխ առաջին

### Ինքնուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունն ու սահմանումը

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միննույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ: Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, ինքնուրույն հասկացությունը ունի մի քանի սահմանումներ՝

- Անկախ, ազատ
- Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
- Մյուսներից առանձնացված
- Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և ուղղորդման
- Կողմնակի ազդեցությունից անկախ<sup>1</sup>

Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության, արժեհամակարգի ձևավորմամբ և այլն<sup>2</sup>:

<sup>1</sup> <https://slovarozhegova.ru/> (16.09.23թ.)

<sup>2</sup> Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման

Ըստ առաջատար հոգեբաններ և մանկավարժներ Վ. Դավիդովի, Գ. Ցուկերմանի դպրոցականների ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը դասապրոցեստում առաջին հերթին արտահայտվում է կարողության և ընդունակության մեջ ինքնուրույն մտածելու, նոր իրավիճակում կողմնորոշվելու, խնդիրը և դրա լուծման ուղիղները ինքնուրույն տեսնելու մեջ:

Ըստ այդմ էլ ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը հանգեցնում է ստեղծագործական ունակությունների ձևավորմանը և արտահայտմանը:

Փիլիսոփայական բառարանում «ստեղծագործություն» հասկացությունը բնորոշվում է հետևյալ սահմանմամբ. Ստեղծագործությունը մարդկային գործունեության արդյունք է, որում ստեղծվում են որակապես նոր նյութական ու հոգևոր արժեքներ՝ հիմնված օբյեկտիվ աշխարհի օրինաչափությունների ճանաչման վրա, ստեղծելով նոր իրականություն, որը կբավարարի հասարակական ամենաբազմազան պահանջմունքները: Փիլիսոփայական ընկալումներով ստեղծվածը հատուկ է կենդանի ու մեռած բնությանը, մարդուն և հասարակությանը:

Ստեղծագործության էության այլ տեսակետ է արտահայտում Յա. Սկալկովան, որը կարծում է, որ ստեղծագործությունը անձի ինտեգրալ որակ է, այն համարժեք չէ մտավոր ընդունակություններին: Ավելին, նա հաստատում էր, որ «...մեծ մտավոր ընդունակությունները ոչ միշտ են համապատասխանում ստեղծագործության բարձր մակարդակին»: Ստեղծագործելու համար նրա կարծիքով անհրաժեշտ են բարձր աշխարհայեցողություն, նոր գիտելիքների և դրանց հիման վրա աչդենն գոյություն ունեցող իրականության կատարելագործման ուղղությամբ կերպափոխող գործունեության ներքին պահանջ, հակասությունների խնդրից բխող նպատակների գիտակցական ձևակերպում, այդ նպատակներին հասնելու ուղիների որոնում, համառություն, աշխատունակություն, թույլ տրված վրիպումներից հրաժարվելու կարողություն, ընդհանուր ուղղվածությունը, ծագող դժվարությունները հաղթահարելու ժամանակ ինքնուրույն ակտիվության ներքին տրամադրվածություն և այլն:

Գիտնականների կարծիքների համաձայն ուսուցման գործընթացում ստեղծագործունեությունը սահմանվում է որխես ամբողջ գիտակցական

---

հոգեբանական գնահատում, / մեթոդական ուղեցույց, կազմողներ՝ Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յու. Սարգսյան, Ե. Բ. Մուրադյան // Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 7

գործունեության տեսակ՝ ուղղված որակապես նոր արժեքների ստեղծմանը, ասինքն անձի, որպես հասարակական սյուբեկտի ձևավորմանը:

Դպրոցականների ստեղծագործական ակտիվության բացահայտման համար սկզբունքային է Լ. Ս» Վիգոտսկու միտքն այն մասին, որ «ստեղծագործությունը գոյություն ունի ոչ միայն այնտեղ, որտեղ այն մեծ պատմական դերակատարում էունենում, այլև այնտեղ, որտեղ մարդը երևակայում է, համադրում է, փոփոխում ու ինչ որ բան է ստեղծում:

Մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ հաճախ է խոսվում ստեղծագործական ընդունակությունների զարգացման խնդրի մասին:

Այսպես, Վ. Ա. Կրուտեցկին ենթադրում է, ոչ «ընդունակություն» հասկացությունը բխում է այն մարդու կարողությունից, որը կատարում է սովյալ գործունեությունը:

Ինչպես տեսնում ենք, հետազոտողը խոսում է ստեղծագործական ակտիվության մասին, որի զարգացման պայմանը խնդիրը դնելը ու այն լուծելն է:

Խոսվելով վերարտադրողական և ստեղծագործական գործունեության տարբերակման մասին, որոնք Բ. Ի, Կորոտյանի կարծիքով, հարաբերակցության մեջ են միմյանց հետ, «նախ՝ որպես մեկ ամբողջի երկու ինքնորոշյալ օղակներ, ընդ որում՝ վերարտադրողական օղակը հանդես է գալիս որպես նախապատրաստական, իսկ ստեղծագործականը՝ որպես հիմնական, երկրորդ՝ որպես ամբողջություն՝ տարբերով յուրաքանչյուր օղակում, ընդ որում առաջին օղակում որպես ամբողջություն հանդես է գալիս վերարտադրողականը, որպես նրա տարրեր՝ ստեղծագործականը, իսկ երկրորդ օղակում հակառակն է»:

Ասվածից հետևում է, որ վերարտադրողական գործունեությունը նախորդում է ստեղծագործականին՝ հանդիսանալով անհրաժեշտություն հաջորդ օղակի կայացման համար<sup>3</sup>:

---

<sup>3</sup>Ն. Գրիգորյան, Դպրոցականների ստեղծագործական ակտիվության զարգացման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, Մանկավարժական միտք, Տաթև գիտակրթական համալիր, Ե., Ջանգակ, 2011, էջ 55

## Գլուխ երկրորդ

### Պատմության դասվանդման մեջ ինքնություն նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները

Ինչպես տեսնում ենք վերարտադրողական և ստեղծագործական գործունեությունները իրար հաջորդող և լրացնող գործընթացներ են, որին կարող ենք ավելացնել ինքնություն նախաձեռնողականությունը:

Ասվածը առավել համոզիչ դարձնելու համար հարկ ենք համարում այն ներկայացնել պատմության դասվանդման ժամանակ կիրառվող բազմատեսանկյուն մոտեցման և դրա կիրառման օրինակով:

Ժամանակակից պատմության դասվանդման մեջ կիրառվում է «բազմատեսանկյուն մոտեցում» տերմինը:

Մինչ 1990-ական թվականները «բազմատեսանկյուն մոտեցում» տերմինը հազվադեպ էր օգտագործվում դպրոցում պատմության դասվանդման համատեքստում, թեև, ինչպես նշում է պրոֆեսոր Բոդո ֆոն Բորրիեսը, այդ հասկացությունը առաջարկվում և ակտիվորեն քննարկվում էր որոշ գերմանացի պատմաբանների, այդ թվում հենց իր՝ ֆոն Բորրիեսի կողմից, դեռևս 1970-ական թթ.:

“Նոր պատմության” մոտեցումն արտացոլում է ավելի ավանդական մոտեցումների անբավարար լինելը, մոտեցումներ, որոնք շեշտը դնում են հետևյալ բաղադրիչների վրա.

- գիտելիքի փոխանցում,
- դպրոցական ծրագրի բովանդակության մեջ քաղաքական և սահմանադրական պատմության գերակշռություն
- իրադարձությունների և անձերի կենտրոնական դեր,
- ծրագրի կառուցումը ազգային պատմության բավանդակությամբ հարուստ, ժամանակագրական բնույթ ունեցող շարադրման շուրջ,
- այս մոտեցման հիմքում ընկած այն ենթադրությունը, որ ազգային պատմության պատմաշարը (նարատիվը) հիմնականում համընկնում է տվյալ պետության ամենամեծ ազգային խմբի կամ լեզվա-մշակութային համայնքի պատմության հետ:

Ի հակադրություն սրան, «նոր պատմության» մոտեցումը, թեև չէր հերքում ժամանակագրության և պատմական գիտելիքի կարևորությունը, նպատակ էր

հետապնդում պատմության դասավանդման մեջ ստեղծել հավասարակշռություն անցյալի մասին աշակերտներին սովորեցնելու և անցյալի մասին պատմական տեսակետից մտածելու ունակությունը զարգացնելու միջև: Հետևաբար, այս մոտեցումն առավել կարևոր էր համարում, որ աշակերտները սովորեն, թե ինչպես պետք է վերլուծել, մեկնաբանել և համադրել պատմական վկայությունները, որոնք առկա են սկզբնաղբյուրներում և գրականության մեջ:

Պատմականորեն մտածել սովորելը նաև նշանակում է գիտակցել այն իրողությունը, որ պատմաբանները, ինչպես նաև պատմության վերակառուցմամբ զբաղվող այլ մասնագետները սահմանափակված են աղբյուրների այն շրջանակով, որը հասանելի է նրանց համար, նրանք մեկնաբանում և օգտագործում են միևնույն տեղեկատվությունը տարբեր ձևերով, ընտրողաբար են մոտենում դրան և շեշտը դնում են դրա տարբեր տեսանկյունների վրա: Այլ խոսքերով, պատմական երևույթների մեծ մասը, եթե ոչ բոլոր պատմական երևույթները, կարող են մեկնաբանվել և վերակառուցվել տարբեր տեսանկյուններից, ինչը պայմանավորված է տեղեկատվության սահմանափակ լինելով, պատմությունը մեկնաբանողների և վերականգնողների սուբյեկտիվ շահերով, և մշակութային փոփոխություններով, որոնք զգալի չափով որոշում են, թե յուրաքանչյուր նոր սերունդ անցյալի որ պահերն է կարևորում: Երկրորդ ընդհանուր զարգացումը կրթության ոլորտում, որը նպաստել է բազմատեսանկյուն մոտեցման հանդեպ հետաքրքրությանը, եղել է այն գիտակցումը, որ անցյալում պատմությունը հաճախ դասավանդվել է մեկ մշակութային վրա հիմնվող, էթնոկենտրոն, ավելի բացառող քան ընդգրկող տեսակետից: Այդպիսի դասավանդումը հիմնված է եղել այն գաղափարի վրա, որ ազգային պատմությունը համընկնում է ամենամեծ ազգային խմբի կամ տիրապետող լեզվա-մշակութային համայնքի պատմության հետ: Զարգացումներից երրորդը կապված էր խորացող այն գիտակցման հետ, որ դպրոցները պետք է ավելի շատ բան անեն երիտասարդներին պատրաստելու համար՝ ապրելու այնպիսի աշխարհում, որը բնութագրվում է էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական բազմազանությամբ: Ինչպես և նախորդ դեպքում, այս գիտակցումը սկզբից առաջացավ 1970-ական թթ. Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայում, մասնավորապես այն երկրներում, որոնք ունեցել են գաղութատիրական անցյալ, կամ օգտագործում էին “հյուրընկալված բանվորների”



աշխատանքը: Այս խնդիրը ավելի սկսեց կարևորվել, երբ Եվրոպական Միության երկրների բնակչությունն աշխատուժի բարձրացող շարժունության հետևանքով այն սկսեց դառնալ ավելի բազմազան մշակութային և էթնիկ առումով:

Նոր կրթական մոտեցումները սկսեցին դիտարկել մշակութային բազմազանությունը որպես մի բան, որով պետք է հպարտանան բոլոր աշակերտները, այլ ոչ թե միայն նրանք, ովքեր պատկանում են մշակութային, լեզվաբանական, էթնիկ և ազգային փոքրամասնություններին: Բազմատեսանկյուն մոտեցումը այնպիսի տերմին է, որը բավականին հաճախ են օգտագործում, բայց ավելի հազվադեպ են սահմանում: Կ. Պետեր Ֆրիցշեն գտնում է, որ դա մի գործընթաց է, «ընկալման ռազմավարություն», որը ենթադրում է, որ մենք մեր սեփական տեսակետին զուգահեռ հաշվի ենք առնում նաև ուրիշի տեսակետը (կամ ուրիշների տեսակետները): Այս գործընթացը նաև ենթադրում է, որ մենք հասկանում ենք, որ մեր սեփական տեսակետը ձևավորվել է մեր սեփական մշակութային համատեքստի ազդեցության տակ, արտացոլում է մեր դիրքորոշումը և մեկնաբանությունն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել և ինչու, թե ինչն է կարևոր և ինչը՝ ոչ, ինչպես նաև կարող է արտացոլել մեր նախապաշարմունքները և կաղապարները: Այս առումով բազմատեսանկյուն մոտեցումը ոչ միայն ռազմավարություն է, այլև նախատրամադրվածություն, այն նշանակում է «պատրաստ լինել և կամենալ իրադրությունը դիտարկել տարբեր

Տեսանկյուններից»: Բազմատեսանկյուն մոտեցումը պատմության և պատմության դասավանդման մեջ նկարագրվել է Էնն Լոու-Բիերի կողմից որպես «պատմական իրադարձությունների դիտարկումը մի քանի տեսանկյուններից»: Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ պատմության և պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման հիմնական բնորոշ առանձնահատկությունը հետևյալն է, այն իրենից ներկայացնում է որոշակի պատրաստակամություն՝ դիտարկելու պատմական իրադարձությունները, անձնավորությունները, զարգացումները, մշակույթները և հասարակությունները տարբեր տեսակետներից, օգտագործելով եղանակներ և մեթոդներ, որոնք հիմնարար դեր են խաղում պատմական գիտության մեջ:

Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցման համար պարտադիր չէ, որ աշակերտները սեփական պատմական շարադրանքը մշակելու համար փորձ

ունենան վերլուծելու աղբյուրները, մեկնաբանելու վկայությունները և համադրելու տեղեկությունները, սակայն այդպիսի փորձն օգտակար է:

Այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ հիմնական հարցերը կարող են խմբավորվել հինգ հիմնական վերլուծական գործընթացների մեջ.

**Նկարագրություն.** Ի՞նչ կարգի աղբյուր է սա: Ո՞վ է այն Նկարագրություն ստեղծել: Ի՞նչպիսին է եղել աղբյուրի հեղինակի ներգրավվածությունը իրադարձություններին (մասնակից, ակնաստես, լրագրող, մեկնաբան, պաշտոնյա, և այլն): Ո՞րքան ժամանակ էր անցել իրադարձությունից: Արդյո՞ք աղբյուրն ասում է, թե որն է եղել դրա ենթադրվող լսարանը: Արդյո՞ք աղբյուրն ասում է, թե որն է եղել դրա հեղինակի նպատակը: Ի՞նչ է այն մեզ ասում որոշակի պատմական իրադարձության կամ զարգացման մասին:

**Մեկնաբանություն.** Եթե մենք չգիտենք, թե ով է եղել աղբյուրի հեղինակը, արդո՞ք աղբյուրից ինչ-որ բան կարելի է եզրակացնել նրա մասին (ներգրավվածության աստիճանը, իրադարձություններին մոտ լինելը, տեսանկյունը, կապերը, դերը, և այլն): Արդյո՞ք աղբյուրից կարելի է գուշակել, թե ինչպես է հեղինակը ձեռք բերել տեղեկատվությունը: Արդյո՞ք կարելի է ստուգել, որքանով է տեղեկատվությունը արժանահավատ: Կարող ենք արդյո՞ք տարբերակել ստուգման ենթարկվող փաստերը, փորձագիտական կարծիքը և անձնական կարծիքը: Կարող ենք արդյո՞ք գտնել աղբյուրի տեսակետը պայմանավորող հանգամանքները (օրինակ որոշակի դիրքորոշում ունենալը, նախապաշարմունքը մեկ այլ դիրքորոշման հանդեպ, և այլն): Արդյո՞ք աղբյուրի հեղինակն առաջարկում է որոշակի եզրակացություններ: Արդյո՞ք րանց ետևում կան որոշակի վկայություններ կան կարծիքներ:

**Կապեր նախկինում ունեցած գիտելիքի հետ.** Արդյո՞ք աղբյուր Կապեր նախկինում ունեցած գիտելիքի հետ ւրի հաղորդած տեղեկությունները հաստատում են այլ աղբյուրներում առկա տեղեկությունները, թե հակասում են դրանց:

**Վկայությունների մեջ բացթողումներ գտնելը.** Արդյո՞ք բացակայում են որոշակի անուններ, տարեթվեր, կամ այլ փաստեր, որոնք կարող էին օգնել պատասխանել նախորդ հարցերին:

**Հետագա տեղեկատվության աղբյուրներ գտնելը.** Ո՞ր աղբյուրների օգնությամբ կարելի է ստուգել աղբյուրի հաղորդած տեղեկությունները և մեկնաբանությունները:

Այնուամենայնիվ, թեև աղբյուրներ օգտագործող մոտեցումը պատմության դասավանդման հիմքում է դնում պատմական մեթոդը և պատմական հետազոտությունը, գոյություն ունեն այս մոտեցման հետ կապված պոտենցիալ վտանգներ (դրանք բոլորն էլ կարող են բացասական ազդեցություն ունենալ բազմատեսանկյուն մոտեցման վրա), և անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այդ վտանգները չեզոքացնելու համար: նդգրկել բազմատեսանկյուն մոտեցումը պատմական նարատիվի մեջ Բազմատեսանկյուն պատմաշարը (նարատիվը) դա այն պատմաշարն է, որը «իսկ հետո» բառերով սկսվող արտահայտությունների սովորական հաջորդականության մեջ ավելացնում է «իսկ այդ ժամանակ» բառերով սկսվող արտահայտություններ: Սա ենթադրում է համեմատական մոտեցում, բայց կա ևս մեկ հարթություն, որը պետք է հաշվի առնել պատմաշարին բազմատեսանկյուն մոտեցման դեպքում. այն համատեքստը, որում կայացվում և իրականացվում են որոշումները, և, դրա հետ մեկտեղ, որոշում կայացնողների շարժառիթները: Դա պահանջում է ընդգրկել բազմատեսանկյուն մոտեցման երկու կարևոր բաղադրամասեր: Առաջինը ներապրումն է (empathy): Երկրորդը հարաբերական մոտեցումն է: Այսինքն, ինչպես են մարդկանց որոշումները և գործողությունները պայմանավորվում ոչ միայն օբյեկտիվ հանգամանքներով, բայց նաև նրանով, թե ինչպես են նրանք ընկալում «ուրիշին», ինչպիսի ենթադրություններ են անում «ուրիշի» հնարավոր ռեակցիաների և մտադրությունների մասին, ընդ որում «ուրիշը» կարող է ընդգրկել դաշնակիցները և թշնամիները, աջակիցները և հակառակորդները, գործընկերները և օտար մարդկանց, սեփական ժողովուրդը և արտասահմանցիները<sup>4</sup>:

**Օրինակ՝** 11-րդ դասարանի հայոց պատմության դասաժամի թեման է «Հնդկահայ ազատագրական կենտրոնը» թեման: Թեմային նախորդել է «Ազատագրական պայքարը XVIII դարի երկրորդ կեսին» որը արդեն սովորել են աշակերտները և պատկերացում են կազմում Ազատագրական պայքարի Հովսեփ Էմինի, Մ. Սարաֆյանի և Հյուսիսային ծրագրերի մասին:

---

<sup>4</sup> Ռոբերտ Ստրադլինգ, Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. Ուսուցչի ձեռնարկ, Եվրոպայի Խորհուրդ, նոյեմբեր, 2003

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806514b8>

Նախորդ թեման հարցերի միջոցով ամփոփելուց հետո ուսուցիչը ներկայացնում է նոր թեման և հետո աշակերտներին բաժանում է խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է հետևյալ հանձնարարությունը:

Ա խումբ- Մտածել Հայաստանի ազատագրության ուղիների մասին Մադրասի խմբակի տեսանկյունից

Բ խումբ – Մտածել Հայաստանի ազատագրության ուղիների մասին Ս. Երևանցի կաթողիկոսի տեսանկյունից

Գ խումբ- Մտածել Հայաստանի ազատագրության ուղիների մասին Մ. Սարֆյանի, Հ. Արղությանի և Հ. Լազարյանի տեսանկյունից

Դ խումբ- Մտածել Հայաստանի ազատագրության ուղիների մասին արևելահայ բնակչի տեսանկյունից

Ե խումբ- Մտածել Հայաստանի ազատագրության ուղիների մասին արևմտահայ բնակչի տեսանկյունից:

Ուսուցիչը տրամադրում է մի շարք սկզբնաղբյուրներ և գրքեր, որոնցից են «Որոգայթ փառացը», «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», Սիմեոն Երևանցու աշխատություններ, Հ. Լազարյանի և Հ. Արղությանի մի շարք թղթեր և նամակներ:

Օգնող հարցադրումներ.

- Ինչու՞ է պետք ազատագրել Հայաստանը:
- Ի՞նչ է տալիս ազատագրված Հայաստանը կողմերին:
- Ինչպե՞ս են պատկերացնում ազատագրման ուղիները, որքանո՞վ են դրանք իրատեսական:
- Կարո՞ղ է հայ բնակիչը աջակից լինել այս պայքարին:
- Ի՞նչ էր մտածում արևելահայ կամ արևմտահայ բնակիչը:
- Եթե ազատագրվեր Հայաստանը դա ի՞նչ տարածքում էր լինելու և ինչպիսի՞ ապագա կունենար:

Հաջորդ դասաժամին կատարված աշխատանքը խմբերը ամփոփում են դասարանում, յուրաքանչյուր խմբին տրվում է հինգ րոպե տեսակետը ներկայացնելու համար, իսկ հետո կողմերը կբանավիճեն:

Այս աշխատանքում երևում է բազմատեսանկյուն մոտեցման երկու կարևոր բաղադրամասերը՝ ներապրումը (empathy) և հարաբերական մոտեցումը, որով էլ

պատմությունը ոչ թե պարզապես շարադրանք կամ անվերջանալի թվերի և անունների շարք է երևում այլ աշակերտը ապրումակցում է ժամանակաշրջանը ցույց տալով ինքնուրույն նախաձեռնությունը և հետազոտական մոտեցում՝ վեր հանելով, վերլուծելով և գնահատելով թեմայի պատճառահետևանքային կապերն ու խնդիրները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով ինքնուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունը և դրանց զարգացումն ու դրսևորումները պատմության դասավանդման ընթացքում մենք եկանք այն եզրակացության, որ պատմություն դպրոցում դասավանդելը ենթադրում է ոչ միայն աշակերտին սովորեցնել դասերի ժամանակագրությունը, իրադարձություններն ու տերմինները այլ նաև պատմական ժամանակաշրջանն ապրումակցելու և հետազոտելու կարողություն, ինչը հնարավոր է կիրառվող մեթոդների արդյունքում, որից մեկը ներկայացրեցինք հետազոտական աշխատանքում:

Մեթոդի արդյունավետությունը ստուգելու համար այն կիրառվել է իմ կողմից դասավանդվող երեք 11-րդ դասարաններում, յուրաքանչյուր դասարանի խումբ աշխատանքի ավարտին ստացել էր իր վերջնարդյունքը, որը հիմնականում չէր կրկնվում, այստեղից էլ վերևի ասված միտքը առավել հիմնավոր է դառնում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ն. Գրիգորյան, Դպրոցականների ստեղծագործական ակտիվության զարգացման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, Մանկավարժական միտք, Տաթև գիտակրթական համալիր, Ե., Զանգակ, 2011:
2. Ռոբերտ Ստրադլինգ, Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. Ուսուցչի ձեռնարկ, Եվրոպայի Խորհուրդ, նոյեմբեր, 2003:
3. Մովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, / մեթոդական ուղեցույց, կազմողներ՝ Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յու. Սարգսյան, Ե. Բ. Մուրադյան // Եր., ԵՊՀ հրատ., 2017:  
<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806514b8>
4. <https://slovarozhegova.ru/> (16.09.23թ.)